Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
դեկտեմբերի 2-ի N 1579 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

«ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԵ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգը սահմանվում է «Հանրակրթության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 36-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան և կարգավորում է «Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունե պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ հաստատություն) շահույթի օգտագործման հետ կապված հարաբերությունները։

2. Հաստատության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված նպատակների համար։

3. Հաստատությունը, համաձայն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ՀՀՀՀՍ 37 ստանդարտի, ձևավորում է պահուստային կապիտալ։

4. Հաստատության հաշվետու տարվա շահույթը բաշխվում է հետևյալ ուղղություններով և չափերով՝

1) պահուստային ֆոնդ՝ հաշվետու տարվա շահույթի մինչև 15 տոկոսի չափով (ռիսկեր և անորոշություններ՝ ներկա արժեքի և ապագայի դեպքեր, անբարենպաստ պայմանագրեր).

2) կուտակման ֆոնդ (ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման և ոչ ընթացիկ ակտիվների վերանորոգման նպատակով)՝ հաշվետու տարվա շահույթի մինչև 35 տոկոսի չափով.

3) սպառման ֆոնդ՝ հաշվետու տարվա շահույթի մինչև 50 տոկոսի չափով, որը ներառում է՝

ա. աշխատողների նյութական խրախուսման ֆոնդը (մասնագիտական և բարեխիղճ աշխատանքի համար),

բ. դրամական օգնության ֆոնդը (աշխատողների երկարատև հիվանդության, մահվան, աշխատողների հարազատների մահվան, ինչպես նաև ամուսնության և այլ առիթներով),

գ. բարեգործական ֆոնդը (սոցիալապես անապահով ընտանիքներից աշակերտներին օգնություն (հագուստ, տարրական դասարաններում անվճար սնունդ և այլն),

դ. այլ (կարող է ներառել կանոնադրական խնդիրների իրականացման համար նախատեսված այլ նպատակներ)։

5. Հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը, հիմք ընդունելով սույն կարգի 4-րդ կետը, մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը սահմանում է հաշվետու տարվա շահույթի բաշխման ուղղությունները և չափերը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ